ԳՐԱԿԱՆ ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆԻ ԴԵՐԱՆՎԱՆԱԿԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՀՆՉԵՐԱՆԳԸ

Ս. Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

Մարդկային հարաբերությունների բարդությունը հատկապես երևում է լեզվական հաղորդակցման ժամանակ։ Հայտնի է, որ լեզվի նշանային հորինվածքը ունի գործառական երեք կողմ՝ հայտանշանային (սիմպտոմ), ազդանշանային (սիգնալ) և խորհրդանշանային (սիմվոլ)[1]։ Առաջինը խոսողի արտահայտությունն է, երկրորդը ուղղված է դեպի լսողը, երրորդը՝ դեպի օբյեկտը։ Հայտանշանը իր ցայտուն դրսևորումն է գտնում բացականչական նախադասությունների մեջ, ազդանշանը՝ հրամայական, խորհրդանշանը՝ պատմողական, իսկ հարցական նախադասությունների մեջ այդ կողմերը հանդես են գալիս չտարորոշված ձևով։

Խորհրդանշանը ճանաչողական, մտքի ձևավորման գործառություն է։ Այն նաև վերաբերական գործառություն է, այսինքն՝ արտահայտում է այնպիսի հարաբերություններ, ինչպես անվանումը և ստորոգումը։ Անվանումը լեզվական գործառություն է, ստորոգումը՝ խոսքային։ Իրականում անվանումը տեղի է ունենում նախադասության, ստորոգման մեջ։ Մյուս կողմից էլ ստորոգումը անվանում է պարունակում։

Ստորոգումը իրականության որևէ հատված վեր է ածում մտքի կամ դատողության։ Ստորոգումը իրական տեսք է ստանում ներկայացման և հաղորդման մեջ։ Ներկայացումը մտքի հնչյունական մարմնավորումն է, որը ասույթի մակարդակում դրսևորվում է որպես հնչերանգ, իսկ հաղորդակցական գործընթացում հնչերանգային դրսևորում ստացած ասույթը անցնում է հաղորդողից ընդունողին։ Ստորոգումը արտալեզվական օբյեկտը վերածում է լեզվական սուբյեկտիվ ձևի, իսկ հնչերանգը՝ լեզվական սուբյեկտը ուրույն լեզվական օբյեկտի։

Յուրաքանչյուր խոսք ունի իր անմիջական դրդապատճառը և իր նպատակը։ Խոսքի վերջնական նպատակը իրականությունը այս կամ այն կերպ փոխելն է, որը սովորաբար կատարվում է մեկ ուրիշի (հաղորդակցի) միջոցով, ուստի և առաջացնում է ազդանշանի անհրաժեշտություն։ Այս դեպքում նախ պետք է լսել, հետո հասկանալ, ապա կատարել, այսինքն՝ հաղորդակցումը կատարվում է որոշակի փուլերով։

Հայտանշանը արդեն մյուս երկուսի (ազդանշան և խորհրդանշան) միջնորդավորումն է։ Այստեղ ամենակարևոր նախապայմանը մտքին արտահայտություն տալն է։ Փաստորեն եթե մենք լսում ենք, նախ ընկալում ենք հնչերանգը և դուրս է գալիս, որ խոսողը արդեն ավարտում է հաղորդման գործողությունը[2]։

Լեզվի գործառության և հաղորդակցական գործընթացի՝ է. Աթայանի տեսությունը շարադրելուց հետո՝ պարզ է, թե որքան կարևոր է յուրաքանչյուր հաղորդակցական տիպի բազմակողմանի ուսումնասիրությունը։

Ինչու-որ հարցումը հարցական նախադասությունների համակարգում գրավում է ուրույն տեղ և մի շարք հարցատեսակների հետ մեկտեղ հարցմա-

---

[1] Կ. Բյուլեր, Теория языка (А. В. Звегинцев, История языкознания XIX—XX веков в очерках и извлечениях, ч. II, М., 1965, с. 26—27).

[2] *է. Աթայան, Գործառական հատկանիշների բաշխումը մարդու լեզվական գործունեության մեջ (Հոբելյանական գիտական նստաշրջանների նյութերի ժողովածու, Երևան, 1981, էջ 345—360), Լեզվական աշխարհի ներքին կերպավորումը և արտաքին վերաբերությունը, Երևան, 1981, էջ 107, 113—129։*

նը բաժին ընկնող հաղորդակցական հիմնական ծանրությունը վերցնում է իր վրա։ Այդ հարցատեսակները հետևյալներն են.

1) Ո՞ւր ես գնում։
2) Տո՞ւն ես գնում, թե թատրոն։
3) Տո՞ւն ես գնում։
4) Տուն գնո՞ւմ ես։

Բերված հարցատեսակներից մեկի ընտրությունը կախված է նրանից, թե խոսողը հարցման հայտնի և անհայտ անդամների նկատմամբ ինչ սուբյեկտիվ վերաբերմունք ունի։ Այս տեսակետից մեր առանձնացրած առաջին երեք հարցատեսակների միջև տեղի է ունենում ներքին աստիճանական անցում՝ պատասխանի որոշակիության (նրա մեջ պարունակած ինֆորմացիայի) նվազագույն աստիճանից մինչև առավելագույնը։ Խոսողի սուբյեկտիվ վերաբերմունքը դրսևորվում է այն բանում, թե նա ինչ չափով է ենթադրում իր հարցման պատասխանը։ Առաջին դեպքում խոսողը ենթադրում է, որ կստանա մեկը հնարավոր պատասխանների անսահմանափակ քանակությունից, երկրորդ դեպքում՝ երկու պատասխաններից մեկը, իսկ երրորդ դեպքում՝ մեկ պատասխան։

Հետաքրքիր է, որ ընտրանքային հարցման եզրերի ծավալումից հասնում ենք մի սահմանի, որն իր ընդգրկումով հավասարվում է ինչ-որ հարցմանը և արտահայտվում է հետևյալ բանաձևով (L-ով նշանակված են տեղ ցույց տվող բոլոր բառերը)[3].

$$\boxed{\text{Գնում ես } L_1^0 + L_2^0 + L_3^0 + \ldots L_{n-1}^0, \text{ թե } Ln} = \boxed{\text{Ու՞ր ես գնում}}$$

Այժմ անցնենք ինչու-որ հարցման հնչերանգի նկարագրությանը։ Ուսումնասիրությունը կատարել ենք փորձառական եղանակով Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի փորձառական հնչյունաբանության փորձասրահում։ Ձայնագրել ենք 14 հնչադասություն՝ երեք հաղորդավարների ընթերցմամբ, որոնք ծնվել և կրթություն են ստացել Երևանում։ Ձայնագրել ենք հետևյալ հնչադասությունները՝ Ո՞ւր գնաց, Քանի՞ տարեկան ես, Ի՞նչ գիրք կարդաց, Ինչպե՞ս անցար գետը, Ո՞վ տարավ, Որքա՞ն ես ապրելու, Որտեղի՞ց է բխում, Ի՞նչ պատահեց քեզ, Որտե՞ղ է գյուղացին, Ի՞նչ է ծրագիրդ, Ո՞վ է այս մարդը, Ո՞րն է այն տաքնապը, Ո՞վ քանդեց, Ո՞վ է մոմել։ Այնուհետև կատարել ենք ձայնագրված հնչադասությունների լսողական վերլուծություն։ Հետազոտության ընթացքում առանձնակի ուշադրություն ենք դարձրել հիմնական տոնի հաճախականության, միջուկի, եռամիջուկի, նախամիջուկի տոնալ կառուցվածքի վրա (միջուկը հնչադասության գլխավոր շեշտ կրող վանկն է, նախամիջուկը՝ միջուկին նախորդող վանկը, եռամիջուկը՝ միջուկին հաջորդող վանկը)։ Նկատի ունենալով, որ յուրաքանչյուր մարդ ունի իր անհատական ձայնային յուրահատկությունները, հնչերանգը ուսումնասիրել ենք հատկապես ըստ հարաբերական ձայնաբանական հատկությունների, որոնք ստացվում են ձայնի հաճախականության, ուժգնության և տևողության բացարձակ արժեքներից (հնչադասության հաճախականության ձայնածավալ, հնչադասության ուժգնության ձայնածավալ, հնչադասության վանկի միջին տևողություն և այլն)[4]։ Երբ միջուկի հաճախականության ձայնածավալի թվային արժեքի առջև դրվում է — նշանը, ապա նշանակում է, որ տոնը միջուկում նվազում է, երբ + նշանը՝ աճում է։

---

3 Այս մասին տե՛ս Ս. Ղուկասյան, Ժամանակակից հայերենի հարցատեսակները (Լեզվի և ոճի հարցեր, Երևան, 1968, էջ 134—160)։

4 Թե ինչպես են որոշվում համապատասխան ձայնաբանական հատկությունները, (տե՛ս Ս. Ղուկասյան, Հարցական նախադասությունների հնչերանգը (Հնչեղանգը և շեշտը ժամանակակից հայերենում, Երևան, 1968, էջ 82)։

Յուրաքանչյուր հաղորդավարի հիմնական տոնի շարժումը ներկայացրել ենք տարբեր կորերով. առաջին հաղորդավարի համար ընտրել ենք գիծ-կետ (—.—) կորը, երկրորդի համար՝ գիծ-երկու կետ (—..—) կորը, երրորդի համար՝ միայն կետերը (....), վերջապես հոծ գիծը՝ ընդհանուրի համար։ Գծագրերում հիմնական տոնի շարժումը տվել ենք ըստ վանկերի. ընդ որում, վանկերի տևողությունները վերցրել ենք իրար հավասար։ Բաղաձայնակիր հատվածներում տոնի շարժումը տրվում է ընդհատվող գծիկներով, որովհետև այդ հատվածներում ձայնալարերը չեն թրթռում, և տոնը բացակայում է։ Հարցական հնչադասությունների արտասանության դեպքում առաջին հաղորդավարի ձայնաշարը փոփոխվում է 80—200 հց սահմաններում, որը կազմում է 16 կիսատոն, երկրորդինը՝ 110—320 հց, որը կազմում է 19 կիսատոն, երրորդինը՝ 80—210 հց, որը կազմում է 17 կիսատոն։

Այժմ փորձառական ողջ նյութից նկարագրենք չորս հնչադասության հնչերանգը, ապա կընդհանրացնենք և ի մի կբերենք ուսումնասիրված բոլոր հնչադասությունների տվյալները։



Գծ. 1. Հիմնական տոնի շարժումը «Ո՞ւր գնաց» հնչադասությունում։

1. Ո՞ւր գնաց։ Այս հնչադասության հիմնական տոնի շարժման ուղղությունը երեք հաղորդավարների դեպքում էլ միայն բարձրացող-իջնող է (գծ. 1)։ Հնչադասությունը նախամիջուկ չունի, որովհետև ինչպես ցույց են տալիս լսողական և փորձառական վերլուծության տվյալները, որպես միջուկ հանդես է դալիս հնչադասության հենց առաջին վանկը, ուստի նախամիջուկի տոնի շարժման մասին խոսելն ավելորդ է։ Միջուկում տոնի շարժումը երեք հաղորդավարների դեպքում էլ բարձրացող-իջնող է, իսկ ետմիջուկում՝ միայն իջնող։

Առաջին հաղորդավարի հաճախականության մակարդակը հարցման սկզբում 120 հց է, երկրորդինը՝ 200, երրորդինը՝ 170 (հաճախականության մա-

կարդակը տվյալ կետի հաճախականության մեծությունն է)։ Առաջին հաղորդավարի հնչադասության հաճախականության ձայնածավալը 13 կիսատոն է, երկրորդինը՝ 16, երրորդինը՝ 17։ Առաջին հաղորդավարի միջուկի հաճախականության աճման ձայնածավալը 8 կիսատոն է, երկրորդինը և երրորդինը՝ 4։ Առաջին և երկրորդ հաղորդավարների եռամիջուկային վանկի հաճախականության նվազման ձայնածավալը 11 կիսատոն է, երրորդինը՝ 10։ Նշենք, որ միջուկի հաճախականության նվազման մեծությունը նույնպես մտցրել ենք եռամիջուկային վանկի հաճախականության նվազման ձայնածավալի մեջ։ Առաջին հաղորդավարի վերջին վանկի հաճախականության ձայնածավալը —2 կիսատոն է, երկրորդինը՝ —5, երրորդինը՝ —7։ Բոլոր երեք հաղորդավարների առավելագույն հաճախականությունը տեղայնանում է միջուկային (ուր) վանկում, իսկ նվազագույնը՝ վերջին (նաց) վանկում։

Առաջին հաղորդավարի հնչադասության առավելագույն ուժգնությունը 34 դբ է, երկրորդինը՝ 35, երրորդինը՝ 32։ Առաջին հաղորդավարի հնչադասության ուժգնության ձայնածավալը 2 դբ է, երկրորդինը՝ 5, երրորդինը՝ 10։ Առաջին և երկրորդ հաղորդավարների առավելագույն ուժգնությունը տեղայնանում է առաջին՝ միջուկային վանկում, իսկ երրորդինը՝ վերջին։ Այս տարբերությունը տեղայնացման պատճառն այն է, որ «Ո՞ւր գնաց» հնչադասության վերջին վանկի ա ձայնավորը մյուսներից շատ ավելի հզոր է և հաղորդավարի արտասանության ժամանակ այդ զգացվում է։

Առաջին հաղորդավարի ողջ հնչադասության տևողությունը 670 մվրկ է, երկրորդինը՝ 630, երրորդինը՝ 640։ Առաջին հաղորդավարի հնչադասության վանկի միջին տևողությունը 223 մվրկ է, երկրորդինը՝ 210, երրորդինը՝ 213։ Առաջին հաղորդավարի միջուկային վանկի տևողությունը (այսուհետև՝ ՄՎՏ) 160 մվրկ է, երկրորդինը՝ 170, երրորդինը՝ դարձյալ 160։ Առաջին հաղորդավարի ՄՎՏ հարաբերությունը վանկի միջին տևողությանը (այսուհետև՝ ՎՄՏ) 0,72 է, երկրորդինը՝ 0,81, երրորդինը՝ 0,75։



Գծ. 2. Հիմնական տոնի շարժումը «Ի՞նչ գիրք կարդաց» հնչադասությունում։

2. Ի՞նչ գիրք կարդաց։ Այս հարցման հիմնական տոնի հաճախականության շարժման ուղղությունը առաջին և երրորդ հաղորդավարների դեպքում բարձրացող-իջնող-հավասար է (տոնը հավասար է շարժվում վերջին երկու վանկերում), երկրորդի դեպքում՝ բարձրացող-իջնող (գծ. 2)։

Այս հարցումը նույնպես նախամիջուկ չունի։ Միջուկում տոնի շարժումը առաջին հաղորդավարի դեպքում բարձրացող-իջնող է, մյուս երկուսի դեպքում՝ միայն բարձրացող։ Ետմիջուկում տոնի շարժումը առաջին և երրորդ հաղորդավարների դեպքում իջնող-հավասար է, իսկ երկրորդի դեպքում՝ միայն իջնող։

Առաջին հաղորդավարի հաճախականության մակարդակը հարցման սկզբում 170 հց է, երկրորդինը՝ 200, երրորդինը՝ 120։ Առաջին և երրորդ հաղորդավարների հնչադասության հաճախականության ծայնածավալը 16 կիսատոն է, երրորդինը՝ 15։ Առաջին և երկրորդ հաղորդավարների միջուկի հաճախականության աճման ծայնածավալը 3 կիսատոն է, երրորդինը՝ 9։ Առաջին և երկրորդ հաղորդավարների ետմիջուկային վանկի նվազման ծայնածավալը 11 կիսատոն է, երրորդինը՝ 16։ Երրորդ հաղորդավարի դեպքում տոնը միանգամից նվազում է մինչև ձայնի նվազագույն սահմանային արժեքին հասնելը, ուստի իր մեծությամբ հավասարվում է հնչադասության հաճախականության ծայնածավալին։ Առաջին և երրորդ հաղորդավարների հնչադասության վերջին վանկի հաճախականության ծայնածավալը 0 է, երկրորդինը՝ —3 կիսատոն։ Առավելագույն հաճախականությունը երեք հաղորդավարների դեպքում էլ տեղայնանում է միջուկային (ինչ) վանկում, իսկ նվազագույնինը՝ տարբեր է։ Առաջին և երկրորդ հաղորդավարների դեպքում տեղայնանում է երկրորդ (գիրք) վանկում, իսկ երրորդի դեպքում՝ վերջին (բաց) վանկում։



Գծ. 3. Հիմնական տոնի շարժումը «Քանի՞ տարեկան ես» հնչադասությունում։

Առաջին հաղորդավարի առավելագույն ուժգնությունը 34 դբ է, երկրորդինը և երրորդինը՝ 32։ Առաջին հաղորդավարի հնչադասության ուժգնության ծայնածավալը 12 դբ է, երկրորդինը՝ 4, երրորդինը՝ 10։

Առաջին հաղորդավարի ողջ հնչադասության տևողությունը 990 մվրկ է, երկրորդինը և երրորդինը՝ 1020։ Առաջին հաղորդավարի հնչադասության վանկի միջին տևողությունը 248 մվրկ է, երկրորդինը և երրորդինը՝ 255։ Առաջին հաղորդավարի միջուկային վանկի տևողությունը 210 մվրկ է, երկրորդինը՝ 200 մվրկ, երրորդինը՝ 220։ Առաջին հաղորդավարի ՄՎՏ հարաբերությունը ՎՄՏ 0,84 է, երկրորդինը՝ 0,78, երրորդինը՝ 0,86։

3. **Քանի՞ տարեկան ես**: Այս հարցման հիմնական տոնի հաճախականության շարժման ուղղությունը առաջին և երրորդ հաղորդավարների դեպ-

քում բարձրացող-իջնող-հավասար է, երկրորդի դեպքում՝ բարձրացող-հավասար-իջնող։ Երրորդ հաղորդավարի դեպքում տոնը հավասար է շարժվում վերջին երեք վանկերում (գծ. 3)։

Փորձառական և լսողական վերլուծությունը ցույց է տալիս, որ «Քանի՞ տարեկան ես» հարցման միջուկը առաջին հաղորդավարի դեպքում դտնըվում է առաջին վանկում (քա), իսկ երկրորդ և երրորդ հաղորդավարների դեպքում՝ երկրորդ(նի) վանկում։ Ունկնդիրները արտասանության երկու տարբերակներն էլ ընկալեցին նորմատիվ։ Ասվածից երևում է, որ առաջին հաղորդավարը նախամիջուկ չունի, իսկ մյուս երկուսը ունեն։ Նախամիջուկում տոնը բարձրացող է, միջուկում՝ նույնպես։ Ետմիջուկում առաջին հաղորդավարի դեպքում տոնը բարձրացող-իջնող է, իսկ երկրորդի և երրորդի դեպքում՝ իջնող։ Քանի որ առաջին հաղորդավարի միջուկն առաջին վանկում է, ուստի տոնի բարձրացումը 2 կիսատոնով շարունակվում է նաև ետմիջուկային վանկում, ապա նոր նվազում։ Այս դեպքում, տոնի բարձրացման պատճառով, ետմիջուկային վանկում տոնը համեմատաբար ավելի քիչ է նվազում (3 կիսատոն)։ Դրան հակառակ, ետմիջուկին հաջորդող վանկում տոնը շատ ավելի է նվազում (8 կիսատոն)։

Առաջին հաղորդավարի հաճախականության մակարդակը հարցման սկզբում 120 հց է, երկրորդինը՝ 130, երրորդինը՝ 100։ Առաջին հաղորդավարի հնչադասության հաճախականության ձայնածավալը 14 կիսատոն է, երկրորդինը՝ 15, երրորդինը՝ 10։ Առաջին և երկրորդ հաղորդավարների միջուկի հաճախականության աճման ձայնածավալը 7 կիսատոն է, երկրորդինը՝ 3։ Առաջին հաղորդավարի ետմիջուկային վանկի հաճախականության նվազմանն ձայնածավալը 3 կիսատոն է, երկրորդինը՝ 13, երրորդինը՝ 10։ Առաջին և երկրորդ հաղորդավարների հնչադասության վերջին վանկի հաճախականության ձայնածավալը —2 կիսատոն է, երրորդինը՝ 0։

Առաջին հաղորդավարի առավելագույն ուժգնությունը 33 դբ է, երկրորդինը և երրորդինը՝ 34։ Առաջին հաղորդավարի հնչադասության ուժգնության ձայնածավալը 14 դբ է, երկրորդինը և երրորդինը՝ 8։ Առաջին և երկրորդ հաղորդավարների առավելագույն ուժգնությունը տեղայնանում է երկրորդ(նի) վանկում, երրորդինը՝ երրորդ (տա) վանկում։

Առաջին հաղորդավարի ողջ հնչադասության տևողությունը 900 մվրկ է, երկրորդինը՝ 1010, երրորդինը՝ 840։ Առաջին հաղորդավարի հնչադասության վանկի միջին տևողությունը 150 մվրկ է, երկրորդինը՝ 168, երրորդինը՝ 140։ Առաջին հաղորդավարի միջուկային վանկի տևողությունը 140 մվրկ է, երկրորդինը՝ 110, երրորդինը՝ 90։ Առաջին հաղորդավարի ՄՎՏ հարաբերությունը ՎՄՏ 0,93 է, երկրորդինը՝ 0,65, երրորդինը՝ 0,64։

4. Ինչպե՞ս անցար գետը։ Այս հնչադասության հիմնական տոնի հաճախականության շարժման ուղղությունը առաջին հաղորդավարի դեպքում բարձրացող-իջնող-բարձրացող-իջնող-հավասար է, երկրորդի դեպքում՝ իջնող-բարձրացող-իջնող-հավասար-իջնող, երրորդի դեպքում՝ բարձրացող-իջնող-հավասար-իջնող, երրորդի դեպքում՝ բարձրացող-իջնող-հավասար (գծ. 4)։

Առաջին և երրորդ հաղորդավարների նախամիջուկում տոնը բարձրացող է, երկրորդում՝ իջնող։ Միջուկում առաջին և երկրորդ հաղորդավարների տոնը բարձրացող-իջնող է, երրորդինը՝ միայն բարձրացող։ Ետմիջուկում առաջին և երրորդ հաղորդավարների տոնի շարժումը իջնող-հավասար է, իսկ երկրորդինը՝ իջնող։

Առաջին հաղորդավարի հաճախականության մակարդակը հարցման սկզբում 130 հց է, երկրորդինը՝ 220, երրորդինը՝ 80։ Առաջին հաղորդավարի հնչադասության հաճախականության ձայնածավալը 16 կիսատոն է, երկրորդինը՝ 19, երրորդինը՝ 13։ Առաջին հաղորդավարի միջուկի հաճախականության աճման ձայնածավալը 4 կիսատոն է, երկրորդինը՝ 13, երրորդինը՝ 9։ Առաջին հաղորդավարի միջուկային վանկի հաճախականության նվազման ձայնածավալը 12 կիսատոն է, երկրորդինը՝ 10, երրորդինը՝ 9։ Առաջին և

երրորդ հաղորդավարների հնչադասության վերջին վանկի հաճախականության ձայնածավալը 0 է, երկրորդինը՝ —2։



Գծ. 4. Հիմնական տոնի շարժումը «Ինչպե՞ս անցար գետը» հնչադասությունում։

Առաջին հաղորդավարի հնչադասության առավելագույն ուժգնությունը 33 դբ է, երկրորդինը՝ 34, երրորդինը՝ 30։ Առաջին հաղորդավարի հնչադասության ուժգնության ձայնածավալը 14 դբ է, երկրորդինը՝ 9, երրորդինը՝ 10։ Առաջին և երրորդ հաղորդավարների առավելագույն ուժգնությունը տեղայնանում է երկրորդ (պես) վանկում, իսկ երրորդինը՝ երրորդ(ան)։

Առաջին հաղորդավարի ողջ հնչադասության տևողությունը 1070 մվրկ է, երկրորդինը՝ 1280, երրորդինը՝ 1080։ Առաջին հաղորդավարի հնչադասության վանկի միջին տևողությունը 150 մվրկ է, երկրորդինը՝ 140, երրորդինը՝ 130։ Առաջին հաղորդավարի միջուկային վանկի տևողությունը 150 մվրկ է, երկրորդինը՝ 140, երրորդինը՝ 130։ Առաջին հաղորդավարի ՄՎՏ հարաբերությունը ՎՄՏ 0, 84 է, երկրորդինը՝ 0,66, երրորդինը՝ 0,72։

Հիմնական տոնի շարժման ուղղությունը։ Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ արևելահայերենում հիմնական տոնի հաճախականության շարժման ուղղությունը հիմնականում բարձրացող-իջնող է, սակայն տոնը հաճախ մի շարք վանկերում շարժվում է նաև հավասար, որն առաջացնում է զգալի տարատեսակություններ։ Այսպիսով, մեր ուսումնասիրության մեջ տոնի շարժումն ունի հետևյալ պատկերը (փակագծում համապատասխան տարբերակից բերում ենք մեկ օրինակ).

1) բարձրացող-իջնող (Որտե՞ղ է գյուղացին, 2-րդ հաղ.),
2) բարձրացող-իջնող-հավասար (Ի՞նչ է ծրագիրդ, 3-րդ հաղ.),
3) բարձրացող-հավասար-իջնող (Ինչպե՞ս անցար գետը, 2-րդ հաղ.),
4) բարձրացող-իջնող-հավասար-իջնող (Ո՞վ է այս մարդը, 1-ին հաղ.),
5) հավասար-իջնող-հավասար (Ի՞նչ պատահեց քեզ, 3-րդ հաղ.),
6) իջնող (Ո՞վ քանդեց, 1-ին հաղ.),
7) բարձրացող-իջնող-բարձրացող-իջնող (Որտեղի՞ց է բխում, 3-րդ հաղ.),
8) բարձրացող-իջնող-հավասար-իջնող-հավասար (Ո՞րն է այն տաքնապը, 2-րդ հաղ.),

Գ) բարձրացող-իջնող-հավասար-իջնող-հավասար-իջնող (Ի՞նչ է ծրագիրդ, 2-րդ հաղ.)։

Նշված 9 դեպքերից ավելի հաճախ հանդիպում է 2-րդը, այսինքն՝ տոնի շարժման ուղղությունը բարձրացող-իջնող-հավասար է (16 անգամ), այնուհետև 1-ինը, երբ տոնի շարժման ուղղությունը բարձրացող-իջնող է (9 անգամ), հետո՝ 3-րդը (4 անգամ), հետո՝ 7-րդը (3 անգամ), իսկ մյուսները հանդիպում են 1—2 անգամ։ Հետազոտված նյութում միայն մեկ դեպք ունենք, երբ տոնի շարժումը միայն իջնող է՝ 6-րդը, երկու օրինակ էլ ունենք, երբ տոնի շարժումը հավասար-իջնող-հավասար է։ Փաստորեն այս դեպքում նույնպես տոնի շարժման ընդհանուր ուղղությունը իջնող է, մյուս բոլոր դեպքերում տոնի շարժման ուղղությունը բարձրացող-իջնող է, որովհետև միջուկից հետո կատարվող իջեցումները շատ չնչին են։

Հնչադասության հաճախականության ձայնածավալը։ Հնչադասության հաճախականության ձայնածավալը այս դեպքում նույնպես հաղորդավարից հաղորդավար ընդունում է տարբեր արժեքներ։ Առաջին հաղորդավարի հնչադասության հաճախականության ձայնածավալը փոփոխվում է 11—16 կիսատոն սահմաններում, այսինքն՝ նվազագույն մեծությունը 11 կիսատոն է (Ո՞վ է այս մարդը), իսկ առավելագույնը՝ 16 (Ինչպե՞ս անցար գետը)։ Ավելի հաճախ այն փոփոխվում է 12—14 կիսատոն սահմաններում։

Երկրորդ հաղորդավարի հնչադասության հաճախականության ձայնածավալը փոփոխվում է 13—19 կիսատոն սահմաններում, այսինքն՝ նվազագույն մեծությունը 13 կիսատոն է (Ո՞վ է այս մարդը), իսկ առավելագույնը՝ 19 (Ո՞ւր գնաց)։ Այն հիմնականում փոփոխվում է 15—16 կիսատոն սահմաններում։

Երրորդ հաղորդավարի հնչադասության հաճախականության ձայնածավալը փոփոխվում է 8—17 կիսատոն սահմաններում, այսինքն՝ նվազագույն մեծությունը 8 կիսատոն է (Ի՞նչ պատահեց քեզ), իսկ առավելագույնը՝ 17 (Ո՞ւր գնաց)։ Այն հիմնականում փոփոխվում է 11—13 կիսատոն սահմաններում։

Հաճախականության մակարդակը հնչադասության սկզբում։ Առաջին հաղորդավարի հնչադասության սկզբի հաճախականության մակարդակը փոփոխվում է 100—170 հց սահմաններում, այսինքն՝ նվազագույն մեծությունը 100 հց է (Որտե՞ղ է գյուղացին), իսկ առավելագույնը՝ 170 (Ի՞նչ է ծրագիրդ)։ Այն ավելի հաճախ փոփոխվում է 120—140 հց սահմաններում։

Երկրորդ հաղորդավարի հնչադասության սկզբի հաճախականության մակարդակը փոփոխվում է 120—220 հց սահմաններում, այսինքն՝ նվազագույն մեծությունը 120 հց է (Որքա՞ն ես ապրելու), իսկ առավելագույնը 220 (Ի՞նչ պատահեց քեզ)։ Այն ավելի հաճախ փոփոխվում է 140—200 հց սահմաններում։

Երրորդ հաղորդավարի հնչադասության սկզբի հաճախականության մակարդակը փոփոխվում է 80—170 հց սահմաններում, այսինքն՝ նվազագույն մեծությունը 80 հց է (Որտեղի՞ց է բխում), իսկ առավելագույնը՝ 170 (Ո՞ւր գնաց)։ Այն հիմնականում փոփոխվում է 80—120 հց սահմաններում։

Միջուկի հաճախականության աճման ձայնածավալը։ Առաջին հաղորդավարի միջուկի հաճախականության աճման ձայնածավալը փոփոխվում է 2—8 կիսատոն սահմաններում, այսինքն՝ նվազագույն մեծությունը 2 կիսատոն է (Որքա՞ն ես ապրելու), իսկ առավելագույնը՝ 8 (Ի՞նչ գիրք կարդաց)։ Այն հիմնականում փոփոխվում է 3—6 կիսատոն սահմաններում։

Երկրորդ հաղորդավարի միջուկի հաճախականության աճման ձայնածավալը փոփոխվում է 3—7 կիսատոն սահմաններում, այսինքն՝ նվազագույն մեծությունը 3 կիսատոն է (Ո՞վ է այս մարդը), իսկ առավելագույնը՝ 7 (Քանի՞ տարեկան ես)։ Այն ավելի հաճախ փոփոխվում է 4—6 կիսատոն սահմաններում։

Երրորդ հաղորդավարի միջուկի հաճախականության աճման ձայնածավալը փոփոխվում է 2—9 կիսատոն սահմաններում, այսինքն՝ նվազագույն մեծությունը 2 կիսատոն է (Որտեղի՞ց է բխում), իսկ առավելագույնը՝ 9

(Ինչպե՞ս անցար գետը)։ Այն հիմնականում փոփոխվում է 4—6 կիսատոն սահմաններում։

Առաջին և երրորդ հաղորդավարների արտասանություններում կա երեք օրինակ (Որտեղի՞ց է բխում, Ի՞նչ պատահեց քեզ, Ո՞վ է այս մարդը), որոնցում միջուկի տոնը անփոփոխ է, այսինքն՝ շարժվում է հավասար։

Ետմիջուկային վանկի հաճախականության նվազման ձայնածավալը։ Առաջին հաղորդավարի ետմիջուկային վանկի հաճախականության նվազման ձայնածավալը փոփոխվում է 5—12 կիսատոն սահմաններում, այսինքն՝ նվազագույն մեծությունը 5 կիսատոն է (Ո՞վ քանդեց), իսկ առավելագույնը՝ 12 (Ինչպե՞ս անցար գետը)։ Այն ավելի հաճախ փոփոխվում է 7—10 կիսատոն սահմաններում։ Այստեղ ունենք մի օրինակ (Քանի՞ տարեկան ես), որում նշված ձայնաբանական հատկությունը ընդունում է 3 կիսատոն արժեքը, որը հաշվի ենք առել ընդհանուր օրինաչափությունից շեղվելու պատճառով։

Երկրորդ հաղորդավարի ետմիջուկային վանկի հաճախականության նվազման ձայնածավալը փոփոխվում է 6—13 կիսատոն սահմաններում, այսինքն՝ նվազագույն մեծությունը 6 կիսատոն (Ո՞վ է այս մարդը), իսկ առավելագույնը՝ 13 (Ո՞րն է այն տագնապը)։ Այն հիմնականում փոփոխվում է 9—11 կիսատոն սահմաններում։

Երրորդ հաղորդավարի ետմիջուկային վանկի հաճախականության նվազման ձայնածավալը փոփոխվում է 8—13 կիսատոն սահմաններում, այսինքն՝ նվազագույն մեծությունը 8 կիսատոն է (Ի՞նչ պատահեց), իսկ առավելագույնը՝ 13 (Ո՞րն է այն տագնապը)։ Այն ավելի հաճախ փոփոխվում է 9—11 կիսատոն սահմաններում։

Հնչադասության վերջին վանկի հաճախականության ձայնածավալը։ Առաջին հաղորդավարի հնչադասության վերջին վանկի հաճախականության ձայնածավալը փոփոխվում է —4 — —1 սահմաններում, այսինքն՝ նվազագույն մեծությունը —4 կիսատոն է (Որտե՞ղ է գյուղացին), իսկ առավելագույնը՝ —1 (Ի՞նչ պատահեց քեզ)։ Այն հիմնականում փոփոխվում է —4— —2 կիսատոն սահմաններում։

Երկրորդ հաղորդավարի հնչադասության վերջին վանկի հաճախականության ձայնածավալը փոփոխվում է —5 — —2 կիսատոն սահմաններում, այսինքն՝ նվազագույն մեծությունը —5 կիսատոն է (Ո՞ւր գնաց), իսկ առավելագույնը՝ —2 (Ո՞վ է այս մարդը)։ Այն հիմնականում փոփոխվում է —3 — —2 կիսատոն սահմաններում։

Երրորդ հաղորդավարի հնչադասության վերջին վանկի հաճախականության ձայնածավալը, բացի մի դեպքից, միշտ մնում է անփոփոխ և ընդունում է 0 արժեքը։ Այն միայն «Ո՞ւր գնաց» հնչադասության դեպքում է, որ ընդունում է —7 կիսատոն արժեքը։

Հնչադասության նվազագույն հաճախականությունը։ Առաջին հաղորդավարի նվազագույն հաճախականությունը փոփոխվում է 80—100 հց սահմաններում, այսինքն՝ նվազագույն մեծությունը 80 հց է (Որտե՞ղ է գյուղացին), իսկ առավելագույնը՝ 100 (Քանի՞ տարեկան ես)։ Այն հիմնականում ընդունում է 80 հց արժեքը։

Առաջին հաղորդավարի հնչադասության նվազագույն հաճախականությունը մեծամասամբ տեղայնանում է վերջին վանկում. 14 օրինակից 9-ի դեպքում տեղայնացել է վերջին վանկում, 2-ի դեպքում՝ նաև նախավերջին (Քանի՞ տարեկան ես, Ի՞նչ պատահեց քեզ), 3-ի դեպքում՝ վերջին երեք վանկերում միաժամանակ (Ի՞նչ գիրք կարդաց, Ինչպե՞ս անցար գետը, Ի՞նչ է ծրագիրդ)։

Երկրորդ հաղորդավարի հնչադասության նվազագույն հաճախականությունը փոփոխվում է 100—110 հց սահմաններում, այսինքն՝ նվազագույն մեծությունը 100 հց է (Որտեղի՞ց է բխում), իսկ առավելագույնը՝ 110 (Ո՞վ է մոմել)։ Այն հիմնականում ընդունում է 100 հց արժեքը։ Այս հաղորդավարի նվազագույն հաճախականությունը միշտ տեղայնանում է վերջին վանկում։

Երրորդ հաղորդավարի հնչադասության նվազագույն հաճախականությունը միշտ ընդունում է 80 հց արժեքը։ Զայնագրված օրինակներից հինգի դեպքում հնչադասության նվազագույն հաճախականությունը միաժամանակ տեղայնանում է նաև հնչադասության սկզբում (Ի՞նչ գիրք կարդաց, Ինչպե՞ս անցար գետը, Որտե՞ղ է գյուղացին, Ո՞րն է այն տագնապը)։ Երեք հնչադասությունների դեպքում այն միաժամանակ տեղայնանում է վերջին երեք վանկերում (Ի՞նչ գիրք կարդաց, Ինչպե՞ս անցար գետը, Քանի՞ տարեկան ես), իսկ հինգի դեպքում այն տեղայնանում է վերջին չորս վանկերում (Քանի՞ տարեկան ես, Ի՞նչ է ծրագիրդ, Ո՞վ է այս մարդը, Ի՞նչ պատահեց քեզ, Ո՞րն է այն տագնապը)։

Հնչադասության առավելագույն ուժգնությունը։ Առաջին հաղորդավարի առավելագույն ուժգնությունը փոփոխվում է 28—35 դբ սահմաններում, այսինքն՝ նվազագույն մեծությունը 28 դբ է (Ո՞վ է այս մարդը), իսկ առավելագույնը՝ 35 (Որքա՞ն ես ապրելու)։ Այն հիմնականում փոփոխվում է 32—34 դբ սահմաններում։

Երկրորդ հաղորդավարի հնչադասության առավելագույն ուժգնությունը փոփոխվում է 30—36 դբ սահմաններում, այսինքն՝ նվազագույն մեծությունը 30 դբ է (Ո՞վ քանդեց), առավելագույնը՝ 36 (Ո՞վ է այս մարդը)։ Այն հիմնականում փոփոխվում է 34—35 դբ սահմաններում։

Երրորդ հաղորդավարի հնչադասության առավելագույն ուժգնությունը փոփոխվում է 30—34 դբ սահմաններում, այսինքն՝ նվազագույն մեծությունը 30 դբ է (Ինչպե՞ս անցար գետը), առավելագույնը՝ 34 (Որքա՞ն ես ապրելու)։ Այն հիմնականում փոփոխվում է 32—33 դբ սահմաններում։

Հնչադասության ուժգնության ձայնածավալը։ Առաջին հաղորդավարի հնչադասության ուժգնության ձայնածավալը փոփոխվում է 6—15 դբ սահմաններում, այսինքն՝ նվազագույն մեծությունը 6 դբ է (Ո՞վ է մոմել), առավելագույնը՝ 15 (Ո՞ն է այն տագնապը)։ Այն հիմնականում փոփոխվում է 12—14 դբ սահմաններում։

Երկրորդ հաղորդավարի հնչադասության ուժգնության ձայնածավալը փոփոխվում է 5—10 դբ սահմաններում, այսինքն՝ նվազագույն մեծությունը 5 դբ է։ (Որքա՞ն ես ապրելու), առավելագույնը՝ 10 (Ո՞րն է այն տագնապը)։ Այն հիմնականում փոփոխվում է 5—8 դբ սահմաններում։

Երրորդ հաղորդավարի հնչադասության ուժգնության ձայնածավալը փոփոխվում է 6—10 դբ սահմաններում, այսինքն՝ նվազագույն մեծությունը 5 դբ է (Որքա՞ն ես ապրելու), առավելագույնը՝ 10 (Ո՞րն է այն տագնապը)։ հիմնականում փոփոխվում է 6—8 դբ սահմաններում։

Այսպիսով, կատարված ուսումնասիրությունից կարելի է հանգել հետևյալ եզրակացություններին.

1. Ինչու-որ հարցման հիմնական տոնի հաճախականության շարժման ուղղությունը հիմնականում բարձրացող-իջնող է, այն հազվադեպ լինում է նաև միայն իջնող։ Ինչու-որ հարցման դեպքում տոնը որոշ վանկերում շարժվում է նաև հավասար և զգալի տարբերակվածություն առաջացնում հիմնական տոնի շարժման ուղղության մեջ։

2. Միջուկի հաճախականության աճման ձայնածավալը միջինը 3—6 կիսատոն է։ Միջուկում տոնի շարժումը հաճախ կարող է լինել նաև բարձրացող-իջնող։

3. Հնչադասության սկզբի հաճախականության մակարդակը բացի երրորդ հաղորդավարից ձայնի հաճախականության ստորին աստիճանին չի հասնում՝ նվազագույնը տարբերվում է 20 հց-ով։ Այն ցածր ձայնաշար ունեցող հաղորդավարների դեպքում փոփոխվում է միջինը 90—120 հց սահմաններում, իսկ բարձր ձայնաշար ունեցողների դեպքում՝ 140—200 հց։

4. Հնչադասության հաճախականության ձայնածավալը ցածր ձայնասահման ունեցող հաղորդավարների դեպքում փոփոխվում է միջինը 11—14 կիսատոն սահմաններում, իսկ բարձր ձայնասահման ունեցողների դեպքում՝ 15—16։

5. Ստմիջուկային վանկի հաճախականության նվազման ձայնածավալը փոփոխվում է միջինը 7—10 կիսատոն սահմաններում։

6. Հնչադասության վերջին վանկի հաճախականության ձայնածավալը կամ անփոփոխ է կամ նվազում է՝ միջինը 2—4 կիսատոն սահմաններում։

7. Հնչադասության նվազագույն հաճախականությունը ընդունում է միջինը 90 Հզ արժեքը և տեղայնանում է հիմնականում վերջին վանկում։

8. Հնչադասության առավելագույն ուժգնությունը փոփոխվում է միջինը 32—35 դբ սահմաններում։

9. Հնչադասության ուժգնության ձայնածավալը փոփոխվում է միջինը 4—7 դբ սահմաններում։

ИНТОНАЦИЯ ЧАСТНОГО ВОПРОСА В ЛИТЕРАТУРНОМ ВОСТОЧНОАРМЯНСКОМ ЯЗЫКЕ

С. В. ГУКАСЯН

Резюме

Экспериментальным путем изучена интонация частных вопросительных предложений. Исследование было проведено на основе таких акустических признаков, как движение основного тона, частотный диапазон фразы, особенности выделения ядра и заядерного слога фразы и других акустических параметров.

Основные выводы сводятся к следующим пунктам: 1. частные вопросительные фразы в основном характеризуются повышением тона в начале фразы и понижением в конце; 2. тон ядра повышается в среднем от 3 до 6 полутонов; 3. диапазон частоты фразы у дикторов с низким регистром голоса варьирует от 11 до 14 полутонов, а с высоким регистром—от 15 до 16 полутонов.

THE INTONATION 'OF THE SPECIAL QUESTION IN THE EAST-ARMENIAN LITERARY LANGUAGE

S. V. GHUKASIAN

Summary

Having been studied experimentally is the intonation of the special interrogative sentences. The study has been carried out on the basis of acoustical attributes like the movement of the basal tone, the frequency range of the phrase, peculiarities of identification of the nucleus and the extra-nuclear syllable of the phrase as well as other acoustic parameters. The principal conclusions yield the following items: 1) The special interrogative phrases are mainly characterized by the elevated tone in the beginning with the dropping towards the end; 2) the nucleus tone is elevated 3 to 6 semi-tones on the average; 3) the frequency range of the phrase in speakers with low-range voice varies 11 to 14 semi-tones while those with the high frequency range—15 to 16 semi—tones.